

ՋԱՎԱԽՔԸ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է

Posted on May 10, 2023 by Keghart



Category: [Opinions](#)



Keghart.org

Ստացուած՝ 8 Մայիս 2023-ին

ԴԵՄՊԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Դ Ի Մ Ո Ւ Մ

Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունները դիմում են Ձեզ խնդրանքով՝ ուշադիր հետևել Վրաստանում ազգային փոքրամասնությամբ բնակեցված Ջավախքում քաղաքացիներին Վրաստանի քաղաքացիությունից զրկելու հաճախակի դարձած գործընթացներին՝ քաղաքական հիմքերով: Մասնավորապես,



Վրաստանի քաղաքացիությունից զրկվեց Տիգրան Մաթևոսյանը՝ Ախալքալաքի մունիցիպալիտետի Գումբուրդո գյուղից: Բանն այն է, որ նա «հանդգնել էր» ակտիվորեն (եռանդուն - **Գեղարդ**) մասնակցել իր գյուղի նշանավոր Սուրբ Համբարձում տաճարի հոգևոր սպասավոր պապի և քրոջ գերեզմանները պղծած վանդալների դեմ պայքարելու, նրանց մնացորդները վերահուղարկավորելու ու տաճարի գավթում խաչքար տեղադրելու սուրբ գործին:

Հակառակ Վրաստանի այն ժամանակվա ՆԳ նախարարի խոստմանը, սկսվեցին հետապնդումներ ակտիվ (եռանդուն - **Գեղարդ**) մարդկանց նկատմամբ և հատկապես Տիգրանի: Արդեն մի քանի տարի է ինչ այս գործը քննվում է տարբեր աստիճանի դատարաններում մարդու իրավունքների կոպիտ խախտումներով և ամենակարևորը՝ խախտվում է լուրջ առողջական խնդիրներ ունեցող Տիգրան Մաթևոսյանի ազատ տեղաշարժվելու և երկրից դուրս անհրաժեշտ բուժում ստանալու իրավունքը:

Հուսով ենք, որ Ձեր դրական արձագանքը էական ազդեցություն կունենա խնդրի

Լուծման վրա:

Ջավախքի մտավորականների միության նախագահ՝ Ա. Շիպակցյան
«Ջավախք» հասարակական կազմակերպության նախագահ՝ Ս. Հակոբյան
«Վիրք» կուսակցության համանախագահ՝ Դ. Ռստակյան

There are no comments yet.